

## «Սասնա ծռեր» դյուցազներգությունը

1. Թվարկի՞ր «Սասնա ծռեր» դյուցազներգության բոլոր ճյուղերի վերնագրերը և գլխավոր հերոսների անունները:

Ճյուղը	Վերնագիրը	Գլխավոր հերոսները
1-ին ճյուղ		
2-րդ ճյուղ		
3-րդ ճյուղ		
4-րդ ճյուղ		

2. Թվարկի՞ր «Սասնա ծռեր» դյուցազներգության կին հերոսներին:

---



---



---



---

3. Ո՞վ է դյուցազներգության քո ամենասիրելի հերոսը: Համառոտ գրի՞ր նրա կատարած որևէ քաջագործության մասին:

---



---



---



---



---

**4. Համեմատիր Սասունցի Դավիթին և Մսրա Մելիքին, ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ ունեն նրանք: Շարունակիր թվարկել:**

- Երկուսն էլ հսկա են, \_\_\_\_\_
- Դավիթը ազնիվ է, \_\_\_\_\_
- Մելիքը խորամանկ է, \_\_\_\_\_

**5. Լրացրու՝ քացթողումները:**

Դյուցազներգությունը ստեղծվել է \_\_\_\_\_ կողմից:

Դյուցազներգության գլխավոր \_\_\_\_\_ մեջ ժողովուրդը մարմնավորել է իր լավագույն գծերը, երազանքներն ու ցանկությունները:

**6. Գրիր ճիշտ պատասխանները:**

- Ու՞մ էին կոչում Առյուծաձև \_\_\_\_\_
- Ու՞մ որդին էր Սասունցի Դավիթը \_\_\_\_\_

**7. Ո՞վ է պատկերված, որտե՞ղ է գտնվում:**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_


\_\_\_\_\_



**8. Ընդգծիր Սասունցի Դավթին բնութագրող բառերը:**

ասպետ, բռնակալ, քաջ մարդ, նենգ մարդ,  
ազնիվ, խիզախ, թույլ մարդ, ուժեղ մարդ

**9. Համեմատիր Մսրա Մելիքի և Դավթի կերպարները դիագրամի միջոցով:**



**10. Ընտրիր ճիշտ տարբերակը:**

- Մսրա Մելիքը հաղթեց Դավթին:
- Սասունցի Դավթը հաղթեց Մսրա Մելիքին:
- Ոչ ոք չհաղթեց:

**11. Ի՞նչ էր Սասունցի Դավթի ձիու անունը:**

- Պոնի
- Կուզիկ Բուռնիկ
- Բուռնիկ Ջալալի

**12. Ի՞նչ էր Սասունցի Դավթի կնոջ անունը:**

- Դեղձուն Ծամ
- Խանդութ
- Արմաղան

**13. Որտե՞ր են կատարվում դյուցազներգության հրադարձությունները:**

- Սասունում
- Երևանում
- Վանում

**14. Լրացրո՛ւ բաց թողնված բառերը:**

*Էհե՜յ, ով քնած է ... կացեք,*

*Ով արթուն է ... թամբեք,*

*Ով թամբել է ... կապեք,*

*Ով կապել է էլեք հեծեք,*

*Չասեք ... Գող-գող էկավ,*

*Գող-գող գնաց:*

*(Դավիթ, ձիեր, արթուն, զենքեր):*

**15. Լրացրո՛ւ ճիշտ պատասխանը:**

- Դավիթը հարձակվելուց առաջ \_\_\_\_\_
- Մելիքը ուզում է խաբեությանը \_\_\_\_\_
- Դավիթը հրաժարվում է \_\_\_\_\_
- Դավիթը փրկում է \_\_\_\_\_

*(Սասունը, զգուշացնում է գորքին, մնալ և ղեկավարել Մսրա երկիրը,*

*հաղթել Դավթին)*



**16. Գրի՛ր հարցերի պատասխանները:**

**ա.** Ինչպե՞ս էր կոչվում Սասունցի Դավթի թուրը \_\_\_\_\_

**բ.** Ու՞մ մասին են այս խոսքերը՝ «Առյուծը առյուծ է, էգ լինի թե որձ»:

\_\_\_\_\_

**գ.** Ինչու՞ է Սասունցի Դավիթը դարձել մեր ամենասիրելի հերոսը

\_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_

**17. Ո՞ր բառով կամ բառակապակցությամբ կրնո՞ւքագրես Դավթի հրաժեշտը:**

- քաջություն
- սեր հարազատ երկրի և ժողովրդի նկատմամբ
- պարծենկոտություն

**18. Ո՞ր բառով կարող ես անվանել Դավթի պահվածքը կովի ժամանակ, երբ նա հարձակվելուց առաջ զգուշացնում է Մելիքի զորքին:**

- մեծամտություն
- ինքնավստահություն
- ասպետություն

**19. Ո՞ր բառերով կրնո՞ւքագրես Դավթի արարքը, երբ արար ծերունու խնդրանքով նա դադարեցնում է կոտորածը:**

- արդարամտություն
- վախկոտություն
- մեծահոգություն
- մեծամտություն
- քաջություն

20. Ո՞ր բառով կարող ես անվանել Դավթի արարքը, երբ նա հրաժարվում է մնալ և թագավորել Մնրա երկրում:

- անխելություն
- հավատարմություն
- մեծամտություն



## Յոմերու

### 1. Լրացրո՛ւ բացթողումները:

Հոմերոսը հին \_\_\_\_\_ մեծագույն բանաստեղծ է: Նա գրել է « \_\_\_\_\_ » և « \_\_\_\_\_ » պոեմները: Պոեմներում հանդես են գալիս հին հունական՝ \_\_\_\_\_ աստվածները, իրենց հոր՝ \_\_\_\_\_ գլխավորությամբ:

### 2. Ընտրի՛ր ճիշտ տարբերակը:

- Ո՞վ էր Ռդիսևը.
  - ա. Իթակեի թագավոր
  - բ. զինվորական
  - գ. բանաստեղծ



- Ինչու՞ էր Ողիսևը լաց լինում յոթ տարի շարունակ.

- ա.* ձանձրությից
- բ.* կարոտից
- գ.* ուրախությունից

- Ո՞վ էր Կալիպսոն.

- ա.* աստվածուհի
- բ.* բանաստեղծուհի
- գ.* ուսուցչուհի

- Ո՞վ էր Չևսը.

- ա.* հայկական աստված
- բ.* հին հույների գլխավոր աստված
- գ.* սովորական մարդ

**3. Լրացրո՛ւ բաց թողնված բառերը:**

Բայց միայն ինձ ` դժբախտիս էր, որ վիճակվեց . . . այնտեղ,  
 Երբ որ իմ նավն արագընթաց մութ . . . անձայրածիր,  
 Շանթահարվեց Չևսի արծաթ կայծակներից ու . . . :

*(խորտակվեց, ծովերում, ընկնել )*

**4. Նշի՛ր հայկական դիցարանի մի քանի աստվածների անուններ:**

---



---



---

5. Ընտրիր և առանձին սյունակներում տեղադրիր հայկական և հունական դիցաբանության աստվածներին:

Հունական աստվածներ	Հայկական աստվածներ
1.	1.
2.	2.
3.	3.
4.	4.

(Վահագն, Հերկուլես, Արամազդ, Ջևա, Անահիտ, Աֆրոդիտե, Արա  
Գեղեցիկ, Հերա):

## Գրիգոր Նարեկացի



### 1. Լրացրո՛ւ բացթողումները:

Գրիգոր Նարեկացին ապրել և ստեղծագործել է \_\_\_\_\_ դարում:  
Նա եղել է \_\_\_\_\_ վանական: Նրա ամենահայտնի  
ստեղծագործությունը \_\_\_\_\_ պոեմն է, որն  
անվանում են նաև \_\_\_\_\_: Ժողովուրդը հավատում է, որ այն  
հրաշագործ ուժ ունի: Գրիգոր Նարեկացին գրել է նաև տաղեր: Դրանցից  
են՝ \_\_\_\_\_:





**2. Նշվածներից որը տաղ չէ:**

- Մատյան ողբերգության ....
- Մեղեդի ծննդյան ....
- Վարդավառի տաղ ....
- Հարության ....

**«Մեղեդի ծննդյան» սաղը**

**3. Գտի՛ր ճիշտ պատասխանները և տեղադրի՛ր համապատասխան տեղում:**

Գեղեցկուհու աչքերը նման են \_\_\_\_\_  
 այտերը՝ \_\_\_\_\_, բերանը՝ \_\_\_\_\_,  
 լեզուն՝ \_\_\_\_\_, ծոցը՝ \_\_\_\_\_,  
*(լուսափայլ և լեցուն կարմիր վարդերով, փայլակնածև արեգակների,  
 նոնենու նման են, երկթերթի ծաղիկ, տավիղ)*

**4. Նկարագրի՛ր գեղեցկուհու զգեստները:**

- Ի՞նչ գույներ ունի պատմուճանը:

---



---

- Ինչպիսի՞ն է գոտին:

---



---

5. Սյունակներից ընտրի՛ր բառերը, սլաքներով իրար միացրո՛ւ և ստացի՛ր բառակապակցություններ:

ախորժալուր	ակնեղեն
ծով	ձայն
թանկարժեք	աչքեր
լուսափայլ	ծոց

## Ներսես Շնորհալի



1. *Լրացրո՛ւ բացթողումները՝ տեղադրելով ներքևում դրված բառերը:*




Ներսես Շնորհալին ծնվել է Կիլիկյան Հայաստանում \_\_\_\_\_ թ.:

Կոչվել է \_\_\_\_\_ իր բազմատեսակ գործերի համար: Եղել է կաթողիկոս: Գրել է \_\_\_\_\_, շարականներ, պոեմներ:

Ժողովուրդը շատ է սիրում նրա «Առավոտ լուսո» հոգևոր երգը: Այն նման է \_\_\_\_\_: Գրված է \_\_\_\_\_ հաջորդական տատերի ձևով: Ունի \_\_\_\_\_ տառ:

(*հանելուկներ, 36, Շնորհալի, աղոթք, այբուրեն, 1100*)

**1. Նկարներով վերականգնի՛ր հանելուկը և գտի՛ր պատասխանը:**

Չորրորտանի է ինչպես .....,   
 Չու է ածում ինչպես .....,   
 Խոտ է ուտում ինչպես անասուն,  
 Մեջքին ունի ոսկորից .....,  (կրիա)

**2. Ո՞ր տարբերակն է ճիշտ: Շրջանակի մեջ վերցրու այն:**

Առավոտ լույսի Առավոտ լույսի  
 Ինձ վրա լույս ծագեցրու Արդար արեգակ  
 Արդար արեգակ Ինձ վրա լույս ծագեցրու:

**3. Տեղադրի՛ր համապատասխան բառը**

Քեզնից եմ, ... , հայցում,  
 Մարդասերիցդ,  
 Ինձ ... :  
 Խորհուրդների ... ,  
 Խավարիս շնորհի՛ր  
 ... լուսավոր:  
 (խորհուրդ, Տեր, բժշկություն, գիտակ )

**4. Ի՞նչ գույներով ես պատկերացնում լուսաբացը: Նշի՛ր քո գույնը:**

- |               |                |
|---------------|----------------|
| 1. վառ կարմիր | 4. բաց կապույտ |
| 2. վառ դեղին  | 5. նարնջագույն |
| 3. ձերմակ     | 6. ոսկեգույն   |

5. Հորինի՜ր փոքրիկ պատմություն «Լույսի առավոտ» վերնագրով:  
Օգտագործի՜ր արեգակ, հոգի, հաճելի, օգնել, սուրբ, շնորհել բառերը:

*Լույսի առավոտ*

---



---



---



---



---

## Նահապետ Քուչակ



### 1. Լրացրո՛ւ բացթողումները:

Քուչակը ծնվել և ապրել է Վանի \_\_\_\_\_ գյուղում: Քուչակն  
ապրել է \_\_\_\_\_ դարում: Հայտնի է իր \_\_\_\_\_:  
Հայրենները հիմնականում գրված են \_\_\_\_\_ թեմաներով:

**2. Փակագծերում տրված բառերից ընտրի՛ր ճիշտը և տեղադրի՛ր:**

Հայրենը (արձակ, չափածո) \_\_\_\_\_ ստեղծագործություն է: Այն կազմված է \_\_\_\_\_ (15 վանկանի ոտանավոր, 7 վանկանի) չորս տողերից:

**3. Ընդգծված բառերը փոխարինի՛ր ճիշտ տարրերակով:**

<u>Ես ունը</u> ու դու լույս, հոգի՛,	_____ ու դու լույս, հոգի՛,
առանց լույս՝ <u>ունքը</u> խավարի,	առանց լույս՝ _____ խավարի
Ես ձուկ ու դու <u>կրակ</u> , հոգի՛,	Ես ձուկ ու _____, հոգի՛,
առանց <u>կրակ</u> ՝ ձուկն մեռանի.	առանց _____՝ ձուկն մեռանի.

**4. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տողերում:**

Երբ ձուկն ի ջրբէն \_\_\_\_\_ ի այլ ջուր ձրգեն, նայ \_\_\_\_\_,  
երբ գիս ի քենէ \_\_\_\_\_, քան զմեռնելն այլ \_\_\_\_\_ չի լինի:

(ապրի, հանեն, ճար, զատեն)

**5. Ընդգծի՛ր փոխաբերական իմաստ արտահայտող բառակապակցությունները:**

- արևի լույս \_\_ հոգու լույս
- բնակվել տանը \_\_ բնակվել սրտում

5. *Տրված բառերը տեղադրի՛ր համապատասխան տեղում:*

Երբ \_\_\_\_\_ ի յաշխարհս եկավ,  
 եկավ իմ \_\_\_\_\_ բնակեցավ,  
 Ապայ յիմ սրտես \_\_\_\_\_ ,  
 \_\_\_\_\_ թափեցավ:

*(Երկրորդ յերկիր, սերն, սիրտըս, ի դուրս)*

## Սայաթ - Նովա

1. *Լրացրո՛ւ բառերը համապատասխան տեղում:*

Սայաթ – Նովան ծնվել է \_\_\_\_\_ թ. \_\_\_\_\_ քաղաքում: Սովորել է արհեստ և սիրել է նվագել \_\_\_\_\_ : Գրել է երգեր, դարձել է աշուղ: Աշուղ նշանակում է \_\_\_\_\_ հորինող: Նա ինքն է կատարել իր երգերը վրաց թագավոր \_\_\_\_\_ պալատում: Սայաթ – Նովան երգել է \_\_\_\_\_ մասին: Նա ցանկացել է մարդկանց տեսնել \_\_\_\_\_ , \_\_\_\_\_ :

*(երգեր, քամանչա, Թիֆլիս, սեր, ազնիվ, բարի Հերակլ)*

**2. Ճիշտ դասավորի՛ր տողերը:**

*ա/ Անմահական ջրով լիքը օսկե փնջան իս ինձ ամա,*

*բ/ Աշխարհումս ախ չիմ քաշի, քանի վուր ջան իս ինձ ամա,*

*գ/ Սուչս իմացի, էնենց սպանե, սուլթան ու խան իս ինձ ամա,*

*դ/ Նստիմ վրես շվաք անիս, զարբար վրան իս ինձ ամա:*

**2. Մլաքներով միացրո՛ւ համապատասխան բառերը:**

օսկե	մետաքսաթել
փնջան	ոսկե
զարբար	իշխան
սուչ	բաժակ
սուլթան	մեղք

**4. Ընդգծի՛ր փոխաբերական իմաստ ունեցող բառակապակցությունը:**

- անմահական ջուր
- ոսկե բաժակ
- մետաքսաթել վրան
- մաքուր ջուր

**5. Դուրս գրի՛ր ծաղիկ նշանակող բառերը:**

*Հուտով հիլ, միխակ, դարչին, վարդ, մանիշակ, սուսամբար իս,  
Կարմրագուն դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա:*

---



---



---

6. Գտի՛ր ընդգծված բառերի հոմանիշները և տեղադրի՛ր աղյուսակում:

Լիզուդ շաքար, պռոշո դանդ, ակռերդ մարքրիտ ալմաս է...

*/աչքեր, ճակատ, ունքեր, ատամներ, այտեր, շրթունք/*

պռոշ	
ակռերք	

7. Տարվա ո՞ր եղանակին է բացվում մանուշակը: Նշի՛ր նրա առանձնահատկությունները:

---



---



---

8. Ո՞րն է քո ամենասիրած ծաղիկը:

---

9. Նկարի՛ր բանաստեղծության մեջ նշված ծաղիկներից որևէ մեկը:







## Խաչատուր Աբովյան

### 1. Լրացրո՛ւ բացթողումները:

Հայ մեծ գրող և լուսավորիչ Խաչատուր Աբովյանը ծնվել է \_\_\_\_\_ թ. \_\_\_\_\_: Տասը տարեկանում ընդունվում է Էջմիածնի միաբանության դպրոցը: Ապա 1823 թ. մեկնում է \_\_\_\_\_ և սովորում նախ՝ \_\_\_\_\_, ապա՝ \_\_\_\_\_ դպրոցում: 1830-1836թթ. սովորում է Գորպատի \_\_\_\_\_:

### «Վերջ Հայասանի» վեպը

#### 2. Ո՞վ է «Վերջ Հայաստանի» վեպի գլխավոր հերոսը:

- Հասան խանը
- Աղասին
- Մոսին
- Թագուհին

#### 3. Ընդգծի՛ր այն բառերը, որոնք բնութագրում են Աղասուն:

Քաջ, անվախ, վախկոտ, հայրենասեր, ազատասեր, չար, մարդասեր, բարի, առնական, թուլամորթ:

**4. Ի՞նչ լեզվով է գրված «Վերք Հայաստանի» վեպը:**

- գրաբար
- արևմտահայերեն
- միջին հայերեն
- աշխարհաբար

**5. Թվարկի՞ր վեպի մի քանի հերոսների անուններ:**


---



---



---

**6. Սլաքներով իրար միացրո՛ւ բառերի և արտահայտությունների գրական համարժեքները:**

բաց էլավ	գուցե
գրից	այրել
էրել	բացվեց
բալքի	գրույց



## Մի ֆայել Նալբանդյան

1. Մ. Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունն է դարձել Հայաստանի պետական օրհներգը:

- «Ազատություն»
- «Ապրիլունին»
- «Իտալացի աղջկա երգը»
- «Մանկության օրեր»

### «Ազատություն» բանաստեղծությունը

2. *Լրացրո՛ւ բաց թողնված բառը:*

Ես անբարբառ մի մանուկ  
 Երկու ձեռքս պարզեցի,  
 Եվ իմ անգոր թևերով  
 \_\_\_\_\_ գրկեցի:

3. *Ճիշտ դասավորի՛ր բանաստեղծության տողերը:*

Ազատությո՜ւն, - գոչեցի, \_\_\_\_\_  
 Փայլակ, կայծակ, հուր, երկաթ, \_\_\_\_\_  
 Թող որոտա իմ գլխին \_\_\_\_\_  
 Թող դավ դնե թշնամին... \_\_\_\_\_

**4. Շարունակի՞ր բանաստեղծական տողը՝ ընտրելով ճիշտ պատասխանը:**

Ազատություն սիրողին, այս աշխարհը \_\_\_\_\_

- շատ լայն է
- խիստ նեղ է
- անչափ ուրախ է
- շատ բարի է

**5. Կազմի՞ր նախադասություններ հետևյալ բառակապակցություններով՝ անբարբառ մանուկ, ազատության զինվոր:**

---



---



---



---

**«ԻՏԱԼԱՑԻ ԱՊՋԿԱ ԵՐԳՐ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԸ**

**6. Ի՞նչ պատգամ է տալիս իտալացի աղջիկն իր եղբորը:**

- Գնալ կռվի և փրկել հայրենիքը
- Հեռանալ երկրից և թաքնվել
- Հաշտվել թշնամու հետ

**7. Օգտվելով բանաստեղծության տեքստից՝ լրացրո՛ւ քառատողը:**

Ամենայն տեղ մահը մի է,

Մարդ մի անգամ պիտ մեռնի.

Բայց երանի՛, \_\_\_\_\_

\_\_\_\_\_:



## Ռափայել Պասկանյան

### 1. *Լրացրո՛ւ բացթողումները:*

Ռափայել Պասկանյանը ծնվել է \_\_\_\_\_ :

Նախնական կրթությունը ստացել է հոր՝ \_\_\_\_\_

դպրոցում: Ապա սովորել է Մոսկվայի Լազարյան \_\_\_\_\_ :

Ավարտելուց հետո աշխատել է Թիֆլիսի \_\_\_\_\_ :

Նրա գրական կեղծանունն էր \_\_\_\_\_ :

### «Արափսի արճասուփը» բանաստեղծությունը

### 2. *Սլաքներով միացրո՛ւ բանաստեղծության բառերը և դրանց գրական համարժեքները:*

դարուց

ալիքների

ալյաց

ձկների

ձկանց

դարերի

զավակունք

զավակները

**3. Բանաստեղծության բաց թողնված տողերը տեղադրի՛ր ճիշտ տեղերում:**

- Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ \_\_\_\_\_  
Ինչո՞ւ արցունք ցայտում եմ \_\_\_\_\_

*(Պար չես բռնում մանկական, Քո սեզ, հրպարտ աչքերից )*

**4. Ի՞նչ է պատասխանում Արաքսը պատանուն: Ինչո՞ւ նա չի կարող ուրախանալ:**

---



---



---

**5. Ընդգծի՛ր համեմատությունը:**

*Էլ չի խոսեց Արաքսը,  
Հորձանք տվեց ահագին,  
Օղակ-օղակ օձի պես  
Առաջ սողաց մոլեգին:*

**6. Գրի՛ր բառերի բացատրությունները:**

ալյաց \_\_\_\_\_  
մոլեգին \_\_\_\_\_  
պչրանք \_\_\_\_\_  
պլշած \_\_\_\_\_  
խայտալ \_\_\_\_\_



## Գաբրիել Սունդուկյան

### 1. Լրացրո՛ւ բացթողումները:

Գաբրիել Սունդուկյանը ծնվել է 1825թ. \_\_\_\_\_ :  
 Սովորել է պետական գիմնազիայում, ապա \_\_\_\_\_ :  
 \_\_\_\_\_ :

Սունդուկյանը գրել է պիեսներ: Նրա լավագույն գործերից են

\_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ :  
 \_\_\_\_\_ :

### «Պեղո» կասակերգությունը

### 2. Որտե՞ղ են տեղի ունենում թատերգության դեպքերը:

- Երևանում
- Բաքվում
- Թիֆլիսում
- Արցախում

3. Ի՞նչ անագնիվ քայլ է կատարում Ձինգինովը:

---



---



---

4. Համեմատիր Պեպոյին և Ձինգինովին, ի՞նչ տարբերություններ ունեն նրանք: Շարունակիր թվարկել:

- Պեպոն ազնիվ է, քաջ

---



---



---



---

- Ձինգինովը խարդախ է, վախկոտ

---



---



---



---

5. Թվարկի՛ր կատակերգության գործող անձանց անունները:

---




---



---



6. Փորձիր նկարել կամ բառերով նկարագրել Էփենիային:



**Պետրոս Դուրյան**

*1. Լրացրո՛ւ բացթողումները:*

Պետրոս Դուրյանը ծնվել է \_\_\_\_\_ թվականին, \_\_\_\_\_  
 քաղաքում: Սովորել է \_\_\_\_\_: Աշխատել է որպես  
 գրագիր, \_\_\_\_\_,  
 \_\_\_\_\_: Գրել է դրամաներ, հոդվածներ և \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_: Դուրյանը ստեղծել է շատ նուրբ,  
 հոգեկան ապրումներով լի քնարերգություն: Նրա բանաստեղծություննե-  
 րից են՝ \_\_\_\_\_:

2. «Լճակ» բանաստեղծությունից դուրս գրի՛ր այն տողերը, որտեղ հեղինակն ասում է, որ իրեն շատերն են մերժել, քանի որ ինքը սուկ բանաստեղծ է և իր քնարից բացի, ուրիշ ոչինչ չունի:

---



---

3. Մեփական բառերով վերաշարադրի՛ր բանաստեղծության հետևյալ տողերը.

Ինչո՞ւ սպառնում են լճակ ու չեն խայտար քո այլակը.

Մի՞թե հայվույդ մեջ անձկավ, գեղուհի մը նայեցավ...

---



---

4. Ո՞վ է «Լճակ» բանաստեղծության քնարական հերոսը:

- լճակը
- բանաստեղծը
- գեղուհին

5. Փոխարինի՛ր ընդգծված բառերը բնագրի բառերով:

ա. Տխուր լճակ իմ

բ. ----- լճակը իմ

ա. Մի՞թե հայվույդ մեջ անձկավ

բ. Մի՞թե հայվույդ մեջ անձկավ

Գեղեցկուհի մը նայեցավ:

----- մը նայեցավ:

**6. Ընդգծի՜ր մակդիրները:**

- մելմադճոտ լճակ
- կապույտ երկինք
- հեզ տղա
- լուսափթիթ ամպեր



## Րաֆֆի

**1. Լրացրո՛ւ աղյուսակը:**

Րաֆֆու իսկական անուն ազգանունը	
Ծննդյան թիվը և վայրը	
Մեկ կենսագրական փաստ	
Մի քանի ստեղծագործության վերնագիր	

**2. Ո՞վ է «ԽԵՆՔՐ» վեպի գլխավոր հերոսը:**

- Սամվելը
- Լալան
- Վարդանը
- Խաչոն

**3. Պատմական ի՞նչ իրադարձություն է ընկած վեպի հիմքում:**

- ռուս-պարսկական պատերազմը
- ռուս-թուրքական պատերազմը
- Հայրենական մեծ պատերազմը
- առաջին համաշխարհային պատերազմը

**4. Ի՞նչ երազ է տեսնում Վարդանը:**

- կերպարանափոխված Հայաստանը երկու հարյուր տարի հետո
- Լալային
- հայրենի գյուղը
- Բայազետ ամրոցը

**1. Գրի՛ր Րաֆֆու պատմվածքներից մի քանիսի վերնագրերը:**

«Գեղեցիկ շարթիկը», \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_


2. Գրիր Բաֆֆու վեպերից մի քանիսի վերնագրերը:

«Կայֆեր», \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

3. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է.

- ա. պատմվածք
- բ. վեպ
- գ. հեքիաթ

4. Նշիր «Խենթը» վեպից մի քանի հերոսների.



5. Ո՞վ էր գլխավոր հերոսը՝ Վարդանը:

\_\_\_\_\_

- ա. Հայ ազատագրական շարժման հերոս, հայ կամավորական:
- բ. Հայ մեծ բանաստեղծ

6. Ի՞նչ էր Վարդանի սիրած աղջկա անունը:

\_\_\_\_\_

7. Ի՞նչ է տեղի ունենում «Խենթը» վեպում: Արտագրի՛ր ճիշտ տարբերակը:

---

---

ա. Վարդանը փրկում է Բայազետը, սակայն չի կարողանում փրկել իր սիրած աղջկան՝ Լալային:

բ. Վարդանը փրկում է և՛ Բայազետը, և՛ իր սիրած աղջկան՝ Լալային:

8. Փորձի՛ր նկարել կամ բառերով նկարագրել Վարդանին:


---

---

---



9. *Լուծի՛ր խաչքառը:*



**Հորիզոնական**

1. Եղիշե Չարենցի իսկական ազգանունը:
2. 10-րդ դարի հայ հանճարեղ բանաստեղծ, Նարեկավանքի վանական:
3. .... Իսահակյան (բանաստեղծի անունը):

**Ուղղահայաց**

1. 18-րդ դարի հայ մեծ աշուղ բանաստեղծի գրական մականունը:
2. Նահապետ Քուչակի անունով մեզ հասած ստեղծագործությունների տեսակի անվանումը:
3. .... Նալբանդյան (բանաստեղծի անունը):

**Կազմողներ՝**  
Տողանյան Ն.  
Մատինյան Ռ.  
Մուրադյան Ռ.

**Համակարգչային աշխատանքները՝**

Աշխեն Այվազյանի

---

Ծավալը՝ 2 մամուլ, Ֆորմատը՝ 70X100<sup>1/16</sup>,  
Տպաքանակը՝ : Տպագրությունը՝ օֆսեթ:  
«Կրթության ազգային ինստիտուտ» Երևան, Տիգրան Մեծի 67,  
Հեռ. 574910

